ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ մշակույթի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/60» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/60-1» պայմանագրում 2018 թվականի սեպտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1739-Ա որոշման՝ Պայմանագրով նախատեսված ԳԱՁ 31-10, 1998 թ. մակնիշի ավտոմեքենան օտարման նպատակով 2018 թվականի մարտի 9-ին գույքի հանձնման-ընդունման ակտով հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը, ինչով պայմանավորված՝ դադարել է գոյություն ունենալ N «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/60-1» պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման գնման պահանջը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնագրի կնքում:

Փոփոխության հիմնավորում : ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 9-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ N ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/60-1 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «25» մեպտեմբերի 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թ. դեկտեմբերի 18-ին կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման N ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/60-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.8 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 9-րդ ենթակետով՝ Կողմերը համաձայնվում են լուծել Պայմանագիրը:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Պայմանագիրը համարվում է լուծված:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Գարանտսերվիս» ՍՊԸ
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
Կառավարական շենք N 2,	էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com
հեռ.՝ (011) 58-51-78	Հեռ. (010)285447, (010)287771
ՀՎՀՀ 02508054,	ՀՎՀՀ 00840437
հ/հ 900011018729	Հ/Հ 193004674290
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
Ս. Մուրադյան	Մ. Նիկողոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.